

սեագոյն ամպերով ելլէ նէ , արեե-
լեան կողմը շատ անձրեի նշան է :

Արեուն ծագած ատենը չորս դին
փայլուն սե ամպ երենայ նէ , անձրեի
նշան է :

Այժմակ կամամպերու ձայթ մունք
որ կողմը ըլլայ նէ՝ անձրե գալու նշան
է . միայն փայլակը հիւսիսի կամ հա-
րաւի կողմերուն որ կողմը տեսնես նէ ,
հոն կ'ըլլայ անձրեը :

Եթէ հիւսիսի կողմէն շատ հով
փչէ , նշան է անձրեի :

Ձկնկուլ թռչունը շատ լուացուի
նէ , շատ անձրե գալու նշան է :

Կովերը երբոր հարաւի կողմը եր-
կայն երկայն կընային՝ անձրեի նշան է :

Որջիւնները երբոր իրենց հաւ-
կիթները տեղէ տեղկը կը կրեն , անձրեի
նշան է :

Հաւերը երբոր կը վազեն , կը կըռ-
կըռան , անձրեի նշան է :

Դորտերը գէպ 'ի ջուրը կը վազեն ,
կը պոռան կը կանչեն , անձրեի նշան է :

Երբոր կը տեսնես որ հովը կակուղ
կը փչէ , կ'ուշացընէ անձրեը . ու կաղ-
նի ծառը շատ պտուղ որ տայ , ան տա-
րին անձրե շատ կ'ըլլայ :

Իմէն կենդանւոյ գէպ 'ի հիւսիս
փախչիլը՝ անձրեի նշան է :

Կոռունկը ատենէն առաջ գայ նէ ,
աշունը երկայն կըքըշէ ու ձմեռը ան-
ձրե ձիւն շատ կ'ըլլայ . Եթէ կոռունկը
ուշ գայ նէ , ձմեռն ալ ուշ կը մնայ :

Իսանկ ուրիշ շատ կենդանեաց
շարժմունքէն , ու լեռան ծառերուն
քիչ կամ շատ պտուղ ունենալէն՝ յա-
ջորդ ձմեռը կը գուշակուի :

Պ. Պ

—————@————

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՔ

ԱՍՏՎԱԲԱԸՆՈՒԹԻՒՆ

Հենքէի նոր հոլորէլ :

Հենքէ անդւնով գերմանացի քաջ
աստղաբաշխը երկու տարի առաջ մո-
լորակ մը գտներ էր , որ Իշտրէա ըսուե-
ցաւ . նոյն անձը աս տարի յուլիսի առ-
ջի օրերը Տրիզէն քաղքին մէջ ըլլա-
լով ուրիշ նոր մոլորակ մըն ալ գտեր
է , և ասոր մեծութիւնը իններորդ
ու տասներորդ կարգի աստղերուն
չափ է : Խտալիոյ աստղաբաշխներն
ալ մօտերս դիտելով ստուգեցին աս
մոլորակին գոյութիւնը , և կ'ըսեն
թէ ասիկայ ալ հաւանական կարծեօք
այն մանր մոլորակաց մէկն է որ հրատ
ու լուսնթագ մոլորակներուն մէջտե-
ղուանքը կը պտըտին :

ԲՈՒՏՎԱԲԱԸՆՈՒԹԻՒՆ

ՈՇԵՒԱԿ :

ԻՄԱՅՑԻՆ արեելեան մեծ արշիպե-
ղագոսին մէջի Ողովքեան կղզիները
անուանի են իրենց բոյսերուն շատու-
թեամն ու աղւորութեամնը համար :
Արմաւենիի տեսակներ կան հոն որ
անոնց մէկ տեսակին պտուղը սակա-
կ'ըսուի , ու խիստ առողջարար ու
համեղ է : Ո՞անկուսթան անունով
ծառ մը կայ որ պտուղը խաղողի , ե-
լակի , կեռասի ու նարնջի համերը
ունի . հուշակաւոր է նաև հացի ծա-
ռը , երենսոսը , հնդիկընկոյզը , թե-
քը՝ որուն փայտը նաւ շինելու կը
գործածուի , քայլեփուլթին՝ որ պա-
տուական եղ ունի : Իս օգտակար ծա-

ռերէն մէկն ալ մեխակն է . ասոր ծառ ու 15 ոտնաչափէն ինչուան 30 ոտնաչափ բարձր կ'ըլլայ . բունը շիտակ է ու գագաթը լայն , ճիւղերը շիտակ հորիզոնական դրքով պառկած . ծաղկը կը լըները հոտաւէտ , պտուղը մութէ կարմիր կամ սևագոյն :

Ուխակին ծաղկըները բացուելէն քիչ մը առաջ գամի նման ձև մը ունին : Ծանք դեռ քացուած՝ կը ժողվեն կը չորցընեն , ու կ'ըլլայ ջղերու ուժ տուող , սրտի օգտակար ու տաքցուցիչ համեմ , և շատ գործածուելուն համար՝ մշակութիւնն ու վաճառականութիւնն ալ շատ յաճախած է հնդկաստան ու Միջիկէի կղզիներուն մէջ : Ուկ ծառը երկու իրեք լիարէ մեխակ կուտայ . և որովհետեւ հինգ հազար մեխակը մէկ լիարէ կը կշռէ , ըսել է թէ երկու լիարէ մեխակ տուող ծառը տասը հազար մեխակ կուտայ , որ շատ բան է : Ծան ծաղկըները երբոր չորնան ու քանի մը օր մուխի մէջ մնան՝ կը սենան : Իսկ ծառին վրայ մնացած պտուղը երթալով կը մեծնայ , ինչուան մէկ բըթաչափ մեծութիւն կ'ունենայ , մէջն ալ կարծր ու սե խէժ մը կը լցուի որ շատ հոտաւէտ կ'ըլլայ , ու զօրաւոր համ մը կ'ունենայ : Ծախկայ կ'առնեն կը ցանեն , հինգ վեց տարիէն կը մեծնայ ծառ կ'ըլլայ , ու կը սկսի ծաղիկ ու պտուղ տալ :

Ողուքեան կղզիները Փորթուկալիք գտան 1511^{bc} , ու անոնց ծովեղերեայ տեղուանքը իրենց բնակութիւնը հաստատելէն ետեւ՝ բոլոր ան կղզիներուն վաճառականուիլը ձեռք առին . քիչ ատենէն հոլանտացիք գընացին հոն , ու կղզեցոց օգնութը զանոնք դուրս վռնտեցին : Ին ատենները մեխակը ամէն մօտ եղած կղզիներուն մէջ ալ կը բուսնէր , բայց հոլանտացիք աս վաճառականութիւնը միայն իրենց պահելու մտքով՝ ան կղզիներուն մէջ եղածները բոլոր փացուցին , ու հրաման հանեցին որ լ'մազյնա ու ինեռնաթ կղզիներուն .

մէջ միայն մշակուի : Ի՞այց աս ջանքերնին պարապ ելաւ , իրենց շահսիրութիւնն ալ խաղք եղաւ . վասն զի մեխակի հունա ուտող թուզունները՝ հունտերը նոյնպէս ամէն տեղ կը տանէին . անտվ սկսան նորէն շատնալ մեխակի ծառերը . հոլանտացիք ալ 1824^{bc} թողուցին իրենց առջի խորհուրդը . ուստի հիմա ուր տեղին օդն ու հողն որ աս ծառիս կը յարմարի՝ ան տեղուանքը մեծ ջանքով կը մշակեն աս գեղեցիկ համեմը :

ԲՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ինաբանական հարցմունքներ :

Ի՞նչո՞ւ երկրիս մթնոլորտը երթենն մէգ կամ մշուշ կը պատէ .

— Ո ասն զի գետնէն ելած շոգին դեռ վեր քարձրացած , ցրտէն խտանալով , կը ծանրանայ ու ալ չկրնար վեր ելլել , անով ցած կը կենայ , ու օդին բարեխառնութիւնը կ'այլայլէ , ետքը կամաց կամաց մանր անձրեսի պէս վար կը թափի :

Ի՞նչո՞ւ մշուշը կը փարատի .

— Ո ասն զի արեւուն ձառագայթները երբոր կը սկսին վրան զարնել , անոնց տաքութենէն կ'անդայտանայ , անով կը թեթենայ ու ամպի պէս վեր կը բարձրանայ , և կամ բոլորովին կը ցրուի :

Ի՞նչո՞ւ մարդուս վրայ եղեամն կամ սառած մէգ չինար .

— Ո ասն զի եղեամը ան մարմիններուն վրայ կ'իջնայ ու կը սառի , որոնք խիստ պազ են . անոր համար է որ աւելի շատ կը նստի ծառերու ճիւղերուն վրայ , չոր տունկերու , քարերու , երկաթներու , ձամքորդներուն մազին ու մօրուքին վրայ և այլն :

Ի՞նչո՞ւ ձմեռը պատուհաններու պակիները կը սառին .

— Ո ասն զի ներսի օդը տաք ըլլալով ու շոգիով լցուած , երբոր ապա-